# ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
# ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

**Պետրոզավոդսկ քաղաքի (Կարելիայի Հանրապետություն, Ռուսաստանի Դաշնություն) և Էջմիածին քաղաքի (Արմավիրի մարզ, Հայաստանի Հանրապետություն) միջև**

Հաշվի առնելով Պետրոզավոդսկ քաղաքի (Կարելիայի Հանրապետություն, Ռուսաստանի Դաշնություն) և Էջմիածին քաղաքի (Արմավիրի մարզ, Հայաստանի Հանրապետություն) միջև փոխշահավետ բարեկամական կապեր զարգացնելու ձգտումը,

հաշվի առնելով այն փաստը, որ երկու քաղաքներում առկա տարբեր ազգությունների ներկայացուցիչների միջև հարաբերությունների բարեկամական մթնոլորտը սկիզբ է դրել Պետրոզավոդսկ և Էջմիածին քաղաքների կազմակերպությունների և քաղաքացիների միջև համգործակցությանը և նպաստել համատեղ նախագծերի իրականացմանը,

առաջնորդվելով Պետրոզավոդսկ և Էջմիածին քաղաքների միջև հարաբերությունները շարունակելու և զարգացնելու ձգտումով՝ Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի միջև ընկերական հարաբերությունների ամրապնդման շահերից ելնելով

ընդունելով այն փաստը, որ զարգացնելով և ամրապնդելով սոցիալ-տնտեսական և մշակութային կապերը, երկու պայմանավորվող կողմերը կարևոր ներդրում կունենան խաղաղության և փոխըմբռնման գործում, ինչպես նաև Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի միջև բազմակողմանի հարաբերությունների զարգացման մեջ,

Պետրոզավոդսկ քաղաքը (Կարելիայի Հանրապետություն, Ռուսաստանի Դաշնություն) և Էջմիածին քաղաքը (Արմավիրի մարզ, Հայաստանի Հանրապետություն), այսուհետ <<Կողմերը>>, պայմանավորվեցին հետևյալի մասին.

## Հոդված 1

Կողմերը նպատակ ունեն զարգացնել համագործակցություն հետևյալ բնագավառներում՝

Մշակույթ

Կրթություն և գիտություն

Բնակչության սոցիալական ապահովություն

Առողջապահություն

Տեղական կառավարում

Էկոլոգիա

Էկոնոմիկա և ներդրումային գործունեություն

Քաղաքային տնտեսություն

Սպորտ

Տուրիզմ

Տեղեկատվական տեխնոլոգիաներ

Աջակցել և օժանդակություն ցուցաբերել քաղաքային հաստատությունների, կազմակերպությունների, հասարակական կազմակերպությունների, ձեռնարկությունների և մասնագետների միջև գործունեության տարբեր ոլորտներում ուղիղ կապեր հաստատելու գործում:

## Հոդված 2

Կողմերը պարտավորվում են համագործակցության կոնկրետ ծրագրեր համաձայնեցնել և հաստատել կանոնավոր կերպով նամակներ փոխանակելու միջոցով:

## Հոդված 3

Իրականացնել քաղաքների պատվիրակությունների փոխանակում և կապեր պաշտոնական ներկայացուցիչների միջև:

## Հոդված 4

Իրականացնել Պետրոզավոդսկ և Էջմիածին քաղաքների բնակչության կյանքի և երկու պետությունների տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մասին տեղեկատվության փոխանակում:

## Հոդված 5

Աջակցել և զարգացնել փոխշահավետ գործնական, առևտրային հարաբերություններ, նպաստել գործարար անձանց պատվիրակությունների փոխայցերին և համատեղ փոխշահավետ տնտեսական կապերի իրականացմանը:

## Հոդված 6

Պարբերաբար անցկացնել տվյալ պայմանգրի կատարման մոնիտորինգ փոխադարձ նամակագրության կամ անձնական հանդիպումների միջոցով:

**Հոդված 7**

Պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից: Պայմանագիրը կնքվում է 5 տարի ժամկետով: Պայմանագրի տեքստի մեջ փոփոխություններ և լրացումներ կատարվում են կողմերի գրավոր համաձայնությամբ: Յուրաքանչյուր կողմը իրավունք ունի դադարեցնել պայմանագիրը՝ մյուս կողմին առնվազն վեց ամիս առաջ գրավոր տեղեկացնելու միջոցով:

**Հոդված 8**

Պայմանագիրը կազմված է ռուսերենով և հայերենով. երկու տեքստերն էլ հավասարազոր են:

Ստորագրված է Պետրոզավոդսկ քաղաքում 2014թ. հունիսի 26-ին:

| | |
|---|---|
| Պետրոզավոդսկ քաղաքի կողմից՝ | Էջմիածին քաղաքի կողմից՝ |
| Պետրոզավոդսկի քաղաքային շրջանի ղեկավար Գ. Ի. Շիրշինա | Էջմիածնի քաղաքապետ՝ Կ. Մ. Գրիգորյան |

# Договор
## между городом Петрозаводском (Республика Карелия, Российская Федерация) и городом Эчмиадзином (Армавирский регион, Армения) о сотрудничестве

Принимая во внимание, стремление развивать взаимовыгодные дружеские связи между городом Петрозаводском (Республика Карелия, Российская Федерация) и городом Эчмиадзином (Армавирский регион, Армения),

принимая во внимание, что доброжелательная атмосфера в обоих городах по отношению к представителям различных национальностей положила начало сотрудничеству между организациями и гражданами в Петрозаводске и Эчмиадзине и способствовала осуществлению совместных проектов,

движимые стремлением продолжать и развивать отношения между городом Петрозаводском и городом Эчмиадзином, отвечающие интересам укрепления дружественных отношений между Российской Федерацией и Арменией,

признавая что, развивая и укрепляя социально-экономические и культурные связи, обе договаривающиеся стороны будут вносить важный вклад в дело мира, взаимопонимания, а также в дальнейшее развитие всесторонних отношений между Российской Федерацией и Арменией,

город Петрозаводск (Республика Карелия, Российская Федерация) и город Эчмиадзин (Армавирский регион, Армения), именуемые в дальнейшем «Стороны»,

договорились о следующем:

### Статья 1

Стороны намерены развивать сотрудничество в следующих областях:

Культура
Образование и наука
Социальная защита населения
Здравоохранение
Муниципальное управление
Экология
Экономика и инвестиционная деятельность
Городское хозяйство
Спорт
Туризм
Информационные технологии

Поддерживать и оказывать содействие в установлении прямых контактов между муниципальными учреждениями и организациями, общественными организациями, предприятиями и специалистами в различных областях деятельности.

## Статья 2

Стороны будут согласовывать и утверждать конкретные планы сотрудничества регулярно путем обмена письмами

## Статья 3

Осуществлять обмен делегациями городов и контакты между официальными представителями.

## Статья 4

Осуществлять взаимный обмен информацией о жизни населения городов Петрозаводска и Эчмиадзина и о деятельности органов местного управления в обеих странах.

## Статья 5

Поддерживать и развивать взаимовыгодные деловые, коммерческие отношения, содействовать обмену делегациями бизнесменов и осуществлению совместных взаимовыгодных экономических контактов.

## Статья 6

Стороны будут проводить мониторинг выполнения данного договора регулярно путем взаимной переписки или личных встреч.

## Статья 7

Договор вступает в силу после его подписания Сторонами. Срок действия договора устанавливается на 5 лет. Внесение изменений и дополнений в текст договора возможно с письменного согласия Сторон. Каждая Сторона имеет право выйти из настоящего Договора путем письменного уведомления об этом другой Стороны за шесть месяцев.

## Статья 8

Договор составлен на русском и армянском языках, и оба текста имеют одинаковую силу.

Совершено в г. Петрозаводск 26 июня 2014 года.

| От имени города Петрозаводск | От имени города Эчмиадзин |
|---|---|
| Глава Петрозаводского городского округа<br>Г.И. Ширшина | Мэр города<br>К.М. Григорян |

# ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
## ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ
### Պետրոզավոդսկ քաղաքի (Կարելիայի Հանրապետություն, Ռուսաստանի Դաշնություն) և Էջմիածին քաղաքի (Արմավիրի մարզ, Հայաստանի Հանրապետություն) միջև

Հաշվի առնելով Պետրոզավոդսկ քաղաքի (Կարելիայի Հանրապետություն, Ռուսաստանի Դաշնություն) և Էջմիածին քաղաքի (Արմավիրի մարզ, Հայաստանի Հանրապետություն) միջև փոխշահավետ բարեկամական կապեր զարգացնելու ձգտումը, հաշվի առնելով այն փաստը, որ երկու քաղաքներում առկա տարբեր ազգությունների ներկայացուցիչների միջև հարաբերությունների բարեկամական մթնոլորտը սկիզբ է դրել Պետրոզավոդսկ և Էջմիածին քաղաքների կազմակերպությունների և քաղաքացիների միջև համագործակցությանը և նպաստել համատեղ նախագծերի իրականացմանը, առաջնորդվելով Պետրոզավոդսկ և Էջմիածին քաղաքների միջև հարաբերությունները շարունակելու և զարգացնելու ձգտումով՝ Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի միջև ընկերական հարաբերությունների ամրապնդման շահերից ելնելով, ընդունելով այն փաստը, որ զարգացնելով և ամրապնդելով սոցիալ-տնտեսական և մշակութային կապերը, երկու պայմանավորվող կողմերը կարևոր ներդրում կունենան խաղաղության և փոխըմբռնման գործում, ինչպես նաև Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի միջև բազմակողմանի հարաբերությունների զարգացման մեջ, Պետրոզավոդսկ քաղաքը (Կարելիայի Հանրապետություն, Ռուսաստանի Դաշնություն) և Էջմիածին քաղաքը (Արմավիրի մարզ, Հայաստանի Հանրապետություն), այսուհետ «Կողմերը», պայմանավորվեցին հետևյալի մասին.

Հոդված 1

Կողմերը նպատակ ունեն զարգացնել համագործակցությունը հետևյալ բնագավառներում՝

Մշակույթ
Կրթություն և գիտություն
Մունիցիպալ կառավարում
Էկոլոգիա
Էկոնոմիկա և ներդրումային գործունեություն
Քաղաքային տնտեսություն
Սպորտ
Տուրիզմ
Տեղեկատվական տեխնոլոգիաներ

Աջակցել և օժանդակություն ցուցաբերել քաղաքային հաստատությունների, կազմակերպությունների, հասարակական կազմակերպությունների, ձեռնարկությունների և մասնագետների միջև գործունեության տարբեր ոլորտներում ուղիղ կապեր հաստատելու գործում:

## Հոդված 2

Կողմերը պարտավորվում են համագործակցության կոնկրետ ծրագրեր համաձայնեցնել և հաստատել կանոնավոր կերպով նամակներ փոխանակելու միջոցով:

## Հոդված 3

Իրականացնել քաղաքների պատվիրակությունների փոխայցեր և հաստատել կապեր պաշտոնական ներկայացուցիչների միջև:

## Հոդված 4

Իրականացնել Պետրոզավոդսկ և Էջմիածին քաղաքների բնակչության կյանքի և երկու պետությունների տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մասին տեղեկության փոխանակում:

## Հոդված 5

Աջակցել և զարգացնել փոխշահավետ գործնական, առևտրային հարաբերություններ, նպաստել գործարար անձանց պատվիրակությունների փոխայցերին և համատեղ փոխշահավետ տնտեսական կապերի իրականացմանը:

## Հոդված 6

Կողմերը պարբերաբար անցկացնելու են սույն պայմանագրի կատարման մոնիտորինգ փոխադարձ նամակագրության կամ անձնական հանդիպումների միջոցով:

## Հոդված 7

Պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Պայմանագիրը կնքվում է 5 տարի ժամկետով: Պայմանագրի տեքստում փոփոխություններ և լրացումներ կատարվում են կողմերի գրավոր համաձայնությամբ: Յուրաքանչյուր կողմը իրավունք ունի դադարեցնել սույն պայմանագիրը՝ մյուս կողմին առնվազն վեց ամիս առաջ գրավոր տեղեկացնելու միջոցով:

## Հոդված 8

Պայմանագիրը կազմված է ռուսերենով և հայերենով. երկու տեքստերն էլ հավասարազոր են:

Ստորագրված է Պետրոզավոդսկ քաղաքում 2019թ. հունիսի 26-ին:

| Պետրոզավոդսկ քաղաքի կողմից՝ | Էջմիածին քաղաքի կողմից՝ |
|---|---|
| Պետրոզավոդսկի քաղաքային շրջանի ղեկավար Ի. Յու. Միրոշնիկ | Էջմիածնի քաղաքապետ՝ Դ. Մ. Գասպարյան |

**Договор**
**Между городом Петрозаводском**
**(Республика Карелия, Российская Федерация)**
**и городом Эчмиадзином (Армавирский регион, Армения)**
**о сотрудничестве**

Принимая во внимание стремление развивать взаимовыгодные дружеские связи между городом Петрозаводском (Республика Карелия, Российская Федерация) и городом Эчмиадзином (Армавирский регион, Армения), принимая во внимание, что доброжелательная атмосфера в обоих городах по отношению к представителям различных национальностей положила начало сотрудничеству между организациями и гражданами в Петрозаводске и Эчмиадзине и способствовала осуществлению совместных проектов, движимые стремлением продолжать и развивать отношения между городом Петрозаводском и городом Эчмиадзином, отвечающие интересам укрепления дружественных отношений между Российской Федерацией и Арменией, признавая, что развивая и укрепляя социально-экономические и культурные связи, обе договорившиеся стороны будут вносить важный вклад в дело мира, взаимопонимания, а также в дальнейшее развитие всесторонних отношений между Российской Федерацией и Арменией, город Петрозаводск ( Республика Карелия, Российская Федерация) и город Эчмиадзин (Армавирский регион, Армения), именуемые в дальнейшем «Стороны», договорились о следующем:

**Статья 1**

Стороны намерены развивать сотрудничество в следующих областях:

Культура

Образование и наука

Муниципальное управление

Экология

Экономика и инвестиционная деятельность

Городское хозяйство

Спорт

Туризм

Информационные технологии

Поддерживать и оказывать содействие в установлении прямых контактов между муниципальными учреждениями и специалистами в различных областях деятельности.

**Статья 2**

Стороны будут согласовывать и утверждать конкретные планы сотрудничества регулярно путем обмена письмами.

**Статья 3**

Осуществлять обмен делегациями городов и контакты между официальными представителями.

**Статья 4**

Осуществлять взаимный обмен информацией о жизни населения городов Петрозаводска и Эчмиадзина и о деятельности органов местного управления в обеих странах.

**Статья 5**

Поддерживать и развивать взаимовыгодные деловые, коммерческие отношения, содействовать обмену делегациями бизнесменов и осуществлению совместных взаимовыгодных экономических контактов.

**Статья 6**

Стороны будут проводить мониторинг выполнения данного договора регулярно путем взаимной переписки или личных встреч.

**Статья 7**

Договор вступает в силу после его подписания Сторонами.

Срок действия договора устанавливается на 5 лет. Внесение изменений и дополнений в текст договора возможно с письменного согласия Сторон. Каждая Сторона имеет право выйти из настоящего договора путем письменного уведомления об этом другой Стороны за шесть месяцев.

**Статья 8**

Договор составлен на русском и армянском языках, и оба текста имеют одинаковую силу.

Совершено в г. Петрозаводск «     » июня 2019 года

| | |
|---|---|
| От имени города Петрозаводск | От имени города Эчмиадзин |
| Глава Петрозаводского городского округа | Мэр города |
| И.Ю. Мирошник | Д. М. Гаспарян |